ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2024 թվականի N 1786 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 14-Ի N 1591-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի սեպտեմբերի 14-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծվող տեխնոլոգիական սարքավորումների, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերի, հումքի և (կամ) նյութերի նկատմամբ սակագնային, մասնավորապես, ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ՋԵՐՄՈՒԿ ԳՐՈՒՊ» փակ բաժնետիրական ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1591-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները՝

1) «ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ, ԴՐԱՆՑ ԲԱՂԿԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՀԱՄԱԼՐՈՂ ՄԱՍԵՐ» աղյուսակի 2.1-ին կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2.2-րդ և 2.3-րդ կետերով՝

«

2.2.	8701219012	DAF XF 480 FT թամբային քարշակների	2017 թ.-2022 թ.	հատ	10	ԵՄ երկրներ, Չինաստան, ԱՄԷ, ԱՄՆ	ԵՄ երկրներ, Չինաստան, ԱՄԷ, Վրաստան	129 426 000	
2.3.	8716393001	Krone SDP 27 eLG50-CS մակնիշի՝ իզոթերմիկ	2022 թ.- 2025 թ.	հատ	10	Եվրամիության այլ երկրներ, Չինաստան, ԱՄԷ	ԵՄ երկրներ, Չինաստան, ԱՄԷ, Վրաստան	172 568 000	

».

2) հավելվածի «ՀՈՒՄՔ ՈՒ ՆՅՈՒԹԵՐ» աղյուսակի 5-րդ կետը հանել.

3) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «10 378 696 000» թիվը փոխարինել «9 806 481 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

15.11.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ